

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔՍ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲՈՒ ՅՐ

Rev. Pere G. Kalémkarian Mechitaristengasse
M 4 Vienne

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

«Ուղիարիտ» համար՝ Տարեկան 12 ֆր.
«Ազգայնական» 6 ֆր.
Արտատպանի համար (եղիտ քիտ լեկ
ծրարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.
ԿԱՆԽԻՒՆ ՎՃԱՐԵԼԻ

Համակ դրամ եւայլն դրկել հետեւեալ հասցեով

ИЗДАТЕЛЬСТВО «ИРОВАНИ» | РЕДАКЦИЯ на ВѢСТНИКЪ
«И р а в у н к ъ»
ВАРНА (България) | Rédaction du journal
„I r a v o u n k“
V A R N A (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
եւ չեւն դրկութիւն եւ յարմար դաստիարակ-
ները միայն կը հրատարակուին աւ-
տոյրովին կաւ մասաւր:
Մանուցման տողը 20 սանթիմ. երե-
թեւ աւելի անգամներու համար 20 օ/0
գեղը կը լինի:

ԼԲՈՒՍԱԾ ԱՄՈՒՍԻՆՆԵՐ

Ամեն օր մեր ձեռք հասնող գա-
ւառական թղթակցութիւններէ և
Պոլսոյ պատրիարքարանի շուրջը
անցած դարձածներէն կը տեղե-
կանանք թէ Մայր Հայրենիքէն
բաժնուող պանդուխտ ազգայնոց
չատերուն կիներէն իրենց ամուս-
նին դարձը խնդրող սրտածակիկ
խնդրագրեր կը մատուցուին Գա-
ւառաց մէջ Առաջնորդարաններու
և Պատրիարքարանին: Այս խեղճ
կիներէն որք 8-10, որք 12-15
տարիներէ ի վեր իր փեսայէն բաժ-
նուած, նաեւ ֆիզիքական ու նիւ-
թական ումեն վայելքէ գրեթէ բո-
լորովին զրկուած իր երիտասար-
դութեան զուարթ օրերը տրտում
ու տխուր կանցնէ, իրեն միայն
մխթարութիւն ունենալով այն ա-
ղօտ յոյսը, որ երեւակայութեանը
մէջ կը պատկերացնէ ամուսնոյն
զուարթ գէմքով ու լեցան քա-
կով հայրենի օճախը, դէպի իր
գիրկը վերադարձին օրը: Խեղճ
հայուհին այս երեւակայութեան
մէջ խորասուզուած պահուն ան-
ցուցած դժբաղդ տարիներուն զըր-
կանքը պահ մը կը մոռնայ և նոր
ու երջանիկ կիանք մը սկսելու և
էրկանը հետ քով քովի կեցած
խաղաղ աշխատասիրութեամբ ի-
րենց ընտանիքին պարէնը հայ-
թայթելու նախախնամական վճի-
ռը «քրտամբ վաստակի ք» կերի-
ցնս զհացն»ը շատ քաղձը և դիւ-
րատար կը զգայ:

Բայց աւագ, պանդուխտին կնոջ
այս երեւակայութիւնը միշտ երե-
ւակայութիւն կը մնայ, որմէ սթա-
փած պահուն երազական չոր յուսա-
խաբութիւն մը, միայնութիւն,
նոթութիւն ու զրկանք կը պատեն
իր շուրջը: Նա՛ երկար ա՛հ մը
կը քաշէ սրտին խորէն և ար-
տասուալի աչքով մանկիկը կուրծ-
քին խփած տնէն դուրս կը սահի,
ուզակի առաջնորդարանը, վար-
դապետին կը ներկայանայ: Էր-
կանը դարձը կը պահանջէ, ապ-
րուստի միջոց կուզէ ու կը յաւե-
լու: «Եթէ հայրսուրբ չէք կա-
րող իմ փեսան բերել տալ որ գայ

իր ընտանիքին տէրն ըլլայ ու մեր
պարէնը հայթայթէ, արտօնեցէ՛ք
զիս որ ուրիշի մը հետ ամուսնա-
նամ»: այս վերջին խօսքը ոչ թէ
մտքի հանգարտութեամբ այլ սըր-
տի դառնութեամբ է որ հայ գեղ-
ջկուհին բերնէն դուրս կը թռի:
Այս բնական ու արդար պահան-
ջին առթիւ վարդապետ ու ժողո-
վականք վայրկեան մը խղճահար-
ուած իրարու նրսն նայելէ վերջ:
«Գնա աղջկիս քիչ մալ համբերէ
մենք պատրիարքին պիտի գրենք»
պատասխանը միայն կրնան տալ:
Համբերութիւն, անվերջ համբերու-
թիւն: Եւ այս է դժբաղդ հա-
յաստանցի դեղջկուհիին միակ բա-
ժինը: Եւ անց հաշուելու վայրագ
կառավարութիւնն և աւագանի պաշ-
տօնիւններու ու ֆերուրներու ի գործ
դրած զրկանքն ու բռնութիւնը,
որ անպաշտպան ընտանիքի մը
կենաց ժամերը աւելի կը գառնա-
ցնեն քան Գողգոթայի խաչեցելոյն
մատուցուած դառն բաժակը:

Աստիճան Հայրենիքի համեստ կեան-
քի շրջանէն դուրս սահելով օտար
հողի վրայ պանդուխտութեամբ ապ-
րող հայը, տակաւ առ տակաւ իր
տոհմային առաքինութիւնները մոռ-
նալով — բացառութիւնները յաբ-
դելի են — իր ընտանիքի ա՛խ ու
վա՛խը առանց յիշելու, անձնատուր
կըլլայ այլ և այլ մոլութիւններու
և վերջ ի վերջոյ անբարոյական
կենցաղի մը, որուն հետեւանօք
թէ իր առաջնութիւնը և թէ իր
անտեսական վիճակը կը խանգար-
ուի ու հայրենիք վերադառնալու
միջոցներէն իսպառ կը զրկուի:
Այս տխուր պատկերները արտա-
սահմանի մէջ ամեն քաղաքիս
մեզ կը հանդիպին: Դիտեցէ՛ք Սիւ-
ծովի ափերէն մինչեւ Կոզկաս,
Դանուբի եզերքներէն մինչեւ Ափ-
րիկէ ու Ամերիկայ:

Քանի մը տարիներ առաջ գրե-
թէ ընդհանուր եղող այդ տխուր
վիճակէն կարելի էր բացառութիւն
մը ընել Պուլկարի մէջ ապրող
հայ պանդուխտներուն: Բայց վեր-
ջին տարիներ երկրին մէջ թէ՛ խառ-
նակեացներու թիւը բազմանալով
և թէ նոր գաղթականութեան հետ

տգեղ պատկերներ ալ աւելնալով,
իր հայրենիքին խռնալովը սնող
Պուլկարի հայ պանդուխտն հե-
տզհետէ անձնատուր եղաւ այն
կարգ մը մոլութեանց, որոնք ար-
գելք կրնան ըլլալ պանդուխտի մը
հայրենիք վերադարձին և կամ հայ-
րենիքի մէջ ապրող իր ընտանիքին
օգնելուն: Ի դուր ամեն շաբթու
Պատրիարքարանէն բազմաթիւ նա-
մակներ կուգան թաղական խոր-
հուրդներուն յանձնարարելով որ
այնինչ հայը համոզեն հայրենիք
վերադառնալու և կամ գոնէ իր
ընտանիքին դրամ զրկելու: Չուր
և ապարդիւն ջանք: զի այդ պան-
դուխտը հոս ուրիշներ ունի սը-
նուցանելու, որոնց հետ իր օրուան
կեանքը կանցնէ: Նա հայրենիքի
կիւլիկարը մոռցած է, հոս էլէն-
քանի, Սօֆիկներ ու Աղանիներ
ունի: Ա՛հ այս վերջինները շատ
սոսկալի են: Եւ անք պահ մը հա-
յաստանցի կամ պոլսցի երիտա-
սարդի մը ամուսնացած, եկեղեց-
ւոյն մէջ հանգիստաւորապէս իր ա-
մուսնոյն հնազանդ, ու հաւատա-
րիմ ըլլալու մեծ «այո՛»ն արտա-
սանած են: Բայց քիչ յետոյ խեղճ
երիտասարդին արիւն քրտինքով
խնայած փոքրիկ հարստութիւնը
հազար ու մէկ փողաքանքով մըս-
խելէ վերջ, լքած իրենց օրինաւոր
ամուսինը իրենք զիրենք դուրս ձը-
գած են Պուլսէն, ապաւինելով
միմիայն իրենց կաշիին, որուն
գնովը կուգան ապրիլ:

Այս կարգի անպատկառ հայ-
ուհիի մը դժբաղդ մէկ զոհին հան-
դիպեցայ անցեալ օր: Սա Սիւ-
բաստոցի մըն էր, մի քանի տարի
առաջ Սամաթիացի աղջկան մը
հետ ամուսնացած և համեստ ըն-
տանիք մը կառավարելու ամեն
ձիրքով օժտուած: Բայց աւագ
որ անպարկեշտ կնոջ մը դէմ էր
ելած: Այս էջ հրէշը Պոլսոյ Պան-
քայի դէպքը պատրուակ բռնելով
իր քմաց համեմատ իր խեղճ է-
րկը երկրէ երկիր, քաղաքէ քա-
ղաք քաշքշած ու անոր փոքր հա-
րստութիւնը սպառնալէ վերջ վառ-
նա՛քալով զանի տնէն արտաքսած
էր: Որպէս զի կարենայ արձակ
համարձակ իր տարփածոներու

հետ ապրիլ: Դժբախտ Սեբաս-
տացին կնոջ այս անակնկալ հար-
ուածէն ապշած ու դանդաղացած
անիծելով իր դժխտ բախտը, ըն-
տանիք մը կազմելէ ու իր առջի
բարեկեցիկ դիրքը վերստանալէ
վհատած Սօֆրատի մը պէս ապ-
րիլ որոշած է: Այս դժբախտ գա-
ւառացին ցնցոտիներ հագած ներ-
կարարի արկղիկը ուսէն կախած
մերթ կերելի վառնայի այս ու
այն փողոցին անկիւնը: Եւ երբեմն
ալ, ով գիտէ ի՞նչ ներքին յոյզէ
մը զրգուած, տարտամ քայլերով
կը յառաջանայ դէպի զինք լքող
անխիղճ կնոջ բնակած տան փո-
ղոցը: Հոն, տանը առջեւ պահ մը
կանգ կառնէ ու երկար հառաջէ
մը յետոյ դառն շեշտով մը կը
ձայնէ «պոյաձը՛ն, ներկարարը»:

Ա՛հ որչափ բազմաթիւ են մեր
մէջ այս կարգի զոհեր, կիներ
լքուած իրենց այրերէն, այրեր լք-
ուած իրենց կիներէն, որով ամբողջ
ընտանիքներ կը կազմալուծուին,
տոհմային բարոյականութիւնը կը
խանգարի, կը քանդուի: Մեր ազ-
գի մէջ բարոյականի այս խանգա-
րումը տանեկենսերորդ դարու այս
վերջին քառորդին սկսած է, և դժ-
բախտաբար հսկայաքայլ կը յառա-
ջանայ, զոր շատեր արեւմտեան
յուռի սովորութեանց ընդօրինակու-
թեան հետեւանք ըլլալ կը կար-
ծեն:

Այս քանդումի դարձանումը բա-
րոյախօսներու երկար խորտններուն
ու խոշոր հատորներուն կը կարօ-
տի: Իսկ մեր ապագայ սերունդին
բարոյապէս փրկութիւնը պէտք է
փնտռել անխառն բարոյականի տէր
ուսուցիչներու դաստիարակութեան
մէջ:

Յ. Գ.

ՄԱՍՆԱԻՈՐ ԾԱՆՈՒՅՈՒՄ

Մեր պատուարժան գործակալ-
ներէն և մեր հաշուոյն բաժնեգին
գանձել յանձնարարած բարեկամ-
ներէն կը խնդրենք որ իրենց գոն-
ձումներու հաշիւներ ընդփոյթ ղըր-
կեն մեզ, որպէսզի չվճարողներու
թիւը իրենց դադրեցնեն:

ԲԱՐԻՁԻ ՇԱՊՐՈՒ ՓՈՂՈՑԻ ԽՆԴԻՐ

Շապրու փողոցը կը գտնուի Կառ տըլիսթի մօտերը. վաճառականական թաղի մը մէջ, բայց ոչ Բարիքի մեծ փողոց մը, որուն անունը բոլոր Բարիքցիներու շրջներուն վրայ է. [Բազմութիւնը կը խոնարհէր այդ փողոցին մէջ, «Կոստ Երսիտան»ի տարացած տունին շուրջը ուր Պ. Ժիւլ Կէռէն և իր քանի մը բարեկամները կը պատրաստուին ոտիկանութեան պաշարման գէժ դիմագրել. [Բայց ո՞վ է Պ. Ժիւլ Կէռէն. [Հակահրէական շարժումի սկիզբէն ի վեր 12 տարիներ առաջ, երկու տարբեր ձգտումներ, երկու զատ խումբեր աչքի կը գտնուէին. Մէկ կողմէ թէօրիստները Լոս անջես Տրիւմֆոնի հետ, միւս կողմէ գործունէ այդ փողոցի Մ'օրէսի մարքիզին հետ. Այս վերջինս իրեն աշխարհ տեսնող մը միտքն ունէր որ կը ըսէր ինքը մեծապէս փութուած էր իրեն հետ մրցող հրէաներու դարձումներուն պատճառով. այս հին վաճառականն էր Պ. Ժիւլ Կէռէն. [Մ'օրիս և Կէռէն տաք պայքար մը սկսան վիլլէթի մէջ, ըս. պանդանոցներու շուրջը ուր կապրի բազմութիւն մը մագդոններու ուրոնց մէջ դիւրաւ կարելի էր հասնել հրէական զգացում մը արթնացնել, որովհետեւ ատենը շարունակ յարաբերութեան մէջ և մինչև իսկ կռիւներու մէջ են իսրայէլացի դուռնաբացներու հետ. [Մ'օրէսի հերերգական մահէն հետքը, Կէռէն միայնակ շարունակեց իր ձեռնարկը. մեծ ուժեղ և քաղցր տեսքով մարդ մ'է այն. [Նախ և առաջ իրեն յարգները հակահրէական դաշնակցութեան մէջ խմբեց, բայց քանի մը ամիս առաջ, նկատելով որ Ֆրանս-Մասսոնութիւնը հրէաներու ձեռքն է, վճռեց Մասսոնական «Կոստ Երսիտան»ի գէժ «Կոստ-Երսիտան» մը հակասեմական կանգնեցնել. կը.

առնթ-Օսման անշարժ կալուածք մը ունէր Գաթէ փողոցին մէջ իր կողմէն նիստերու և միութիւններու համար. Կէռէն Կոստ-Երսիտանի տունը շինել տուաւ Շապրու փողոցը. [Մինչև այդ վայրէջքին կը կարծէին որ կռիւն լաւ արդիւնք տուած չէր. բայց երբ այդ խոշոր տունը կանգնեցուց Շապրու փողոցին մէջ, երբ տեղեկութիւնները եկան զինքը այցելելու և տեսնել որ այդ տունը զարդարուն «արարած» է մը աւելի ամրացած բերդի մը կազմակերպութիւնն ու դիրքը ունի. այն ատեն միայն կրցան հասկնալ որ, Ժիւլ Կէռէն այն պարզամիտ տեսակէն չէր, ինչպէս կը կարծէին առաջ. Չորս օր առաջ Պ. Ժիւլ Կէռէն հասարակութեան ուշադրութեան առարկայ եղաւ այնքան Տրէֆիւսը. թէեւ սա ալ ճշմարիտ է որ «Կէռէն»ի խնդիրը և Տրէֆիւսի խնդիրը իրարու հետ շատ սերտ միացած են. [Այն ատեն որ դաւաճութեան մը վրայ կը խօսէին կառավարութեան գէժ, Պ. Կէռէն պէտք էր տեսնէր մէջ եղած ըլլար. բայց մինչդեռ միւս ամբաստանները Պ. Պ. Տէռուէտ Պիւֆէ, ալ Մապրան, ձերբակալուեցան և բանտարկուեցան, Պ. Կէռէն, վերջի շարժում օրը իր քանի մը ընկերներով ամբարացաւ «Կոստ-Երսիտան»ի տան մէջ և յայտարարեց որ պիտի դիմադրէր իր ունեցած ուժովը զինք ձերբակալելու ռզմունքներուն.

Այն ատենէ ի վեր բանակցութեան մէջ մտած են ոստիկանութիւնը և Կէռէն, մեր պաշտօնակիցներէն և պատգամաւորներէն շատեր զնացին տեսնելու ներքին գործոց նախարարը և խնդրեցին պարզապէս Պ. Կէռէնին ձգել դուրս ելնել, որ կամաւ բանտարկուեալ պիտի յայտարարուէր. Բայց լուծումը չընդունուեցաւ. Միջոց կը փնտռեն արիւնահեղ կռուի մը տեղի չտալու համար, որովհետեւ

կերելի որ Պ. Կէռէն և իր ընկերները չը պիտի թող տային զիրենք ձերբակալելու, առանց իրենց տրամադրութեան տակ ունեցած պաշտպանողական միջոցներուն դիմելու.

Ամեն իրիկուն կըսէին «վաղը առաւօտ պիտի տեղի ունենայ յարձակումը» և Բարիքցիին ամեն առաւօտ, կերթայ տեսնելու թէ ինչ պիտի անցնի և կը խնդայ ոստիկանութեան ընթերցան, սակայն կրնանք վստահ ըլլալ, որ նա պիտի կատարէ ամեն հրաման որ իրեն պիտի տրուի վերէն.

Ա. Սիւսի և Միլի Ս. Դաւիթ-պէկ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Պոռնիկ, 6 օգոստոս 99

Ներկայ լուսաւորեալ դարու մէջ ամենէն ունի տնկեղծութիւնն և լրջութիւնը հասարակութեան դաստիարակներէն ակնկալուելու իրաւունքը ունենալ կը կարծենք. Հասարակաց մտքին զլաւոր դաստիարակներէն մին մասունքն է, մանաւանդ միջ հայոց համար, որ տասնամեակի լուրջ թերթերն են որ ամեն խնդրոտներէն ու ճշմունքներէն զերծ, կոչուած են անմիջականութեամբ հայ ժողովրդեան ուղեցոյցը, միջնորդը ու դաստիարակը ըլլալու. Այս բարձր պաշտօնին կոչուած անձնաւորութիւններ փափքելի է որ գոնէ սրտի անկեղծութիւն և մաքրութիւն ունենան և անձնական ու կուսակցական նեղ հաշիւներէ ըստ ամենայնի զերծ ըլլան իրենց զբոյժի արտագրութիւններն, զորս հասարակութիւնը լափելով պիտի կարգայ. բայց առաջ. ստէպ առաջ հակառակ չկը պատահի և որուն շնորհիւ կեղծաւորն ու խաբարներն կը պաշտպանուին և ազատ ասպարէզ կը գտնեն ժողովուրդի անմեղունակ խաւերուն մէջ իրենց թոյնը տարածելու.

Շատ օր չէ որ կարգացինք Շապրու

ժողովի մէջ «Համալի քուէ» խմբագրական մը. եթէ ստոյգ փաստերու վրայ ինչով գրած լինէր, ամենահամակրելի կերպով կը վերաբերուէինք արգոյ խմբագրի հետ և կը ջատագովէինք զինքն. սակայն ինք շատ շուտ ետ առաւ խօսքն. պատճառ. — Ուղիշտեալ առանց խնդիրը ուսումնասիրելու և կարեւոր փաստ ձեռք բերելու գրած էր ինչ որ իր անսանձ գրչին իրեն թելադրած էր.

Պոռնիկացի ազգային գործընկեր գտնուելով ապիկար անձանց ձեռք 3 տարի շահագործուեցան և եղան շահատակութիւնները իրաւունք ու Շարժումի մէջ անխտիր գրուեցան. Սա մօտ օրերս ժողովուրդային փաստակար տարւոյ հեռացումով պիտի գործնէ և ի պաշտօն կոչեց անբասիր անձերէ բաղկացեալ թաղականութիւն մը. եւ այս անցած դարձանք ըստ կարգին պարբերաբար հրատարակուեցան այդ թերթերուն մէջ. Այս բարոյական յաղթանակին հանգէպ ինկած թաղականութիւնը և իր բարենակները չկրցան ուրիշ բան մը ընել, այլ դիմեցին ստոր մասնութեան ինչպէս այդ ալ բացարձակ գրուեցաւ և մատնանիլ եղաւ իր ժամանակին.

Բայց հիմա այս յայտի զբարարութեանց պարագլուխ եղող անձին նամակն է որ կը հիւրընկալէ «Շարժում» և կարտառպէ իր 55 թուին մէջ.

Այս թերթին էր որ «Իրաւունք» գիտել տալ կը ջանար թէ առանց քննութեան և խնդիրներու իրազեկ լինելու կը գրէ եւ այլն. Ահա կարգին է հարցնելու «Շարժում»ին թէ ինք չէ՞ր որ Ունեմանի մասին Պոռնիկէն գացած թղթեր և յորուածներ հրատարակեց. ինչպէս և իրաւունքն ու Հայեղին. Եթէ սուտ էին ինչու անոնք հրատարակեց, իսկ եթէ ստոյգ էին ինչու Ունեմանի նամակն արտատպեց. մինչդեռ Ունեմանի գրութիւնը հրատարակելու միջոցին ինքն իր

ԲՈՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ (34)

ԺԱՄԱՆԱԿԱԿՅՅ ՇԱՅ ԿԵԱՆՔԷ ՊԱՏԿԵՐ ՄԸ
— Խ.Օ. —
ՄԱՍՆ Բ.

90 թուականի յունվարին էր երբ Պոլիսի թերթերէ մէկուն մէջ, որոնց իր գասերու աւարտէն վերջ հաւատարիմ ընթերցողն էր Վահրամ Ակնէն յունվար 16 թուականաւ գրուած նամակ մը կարգաց. Ալիքսանի յայտնի ստորագրութեամբ, նամակը ամբողջութեամբ տեղւոյն ազգային կեանքովը կը զբաղէր. ատոր մէջը ուրիշ հոտեր ալ առաւ մեր երիտասարդը.

Տեսակ մը արգարանուի զգուշութեամբ ան մինչև տասը ամիս ո՛չ իր ծնողքին, ոչ ալ իր բարեկամներուն գրեց. խնդրեց հայրենակիցներէն բղղուշանալ. հօրեղբայրը քանի մը անգամ պատրաստուեցաւ իր եղբորը և հարսին անոր Պոլիս գտնուելուն բերկառիթ լուրը հաղորդել, սակայն Վահ-

րամի համոզիչ խօսքերուն վրայ դիւրազաս սեպեց լուրիւն պահելը. Վահրամին Ակնի մէջ, իր մեկնելէն հաջորդ փնտռուած ըլլալը իմացուած էր Պոլիսի մէջ, որով հոն գտնուած ատեն իրեն գրուած գաղտնի նամակին նշանակութիւնը կը չեղանէր. Վահրամի կարծիքով, ինչ որ անհաւատական ալ չէր, եթէ երբէք կառավարութիւնը իր Պոլիս գտնուելը իմանար՝ հեռագրով մը զինքը բանտարկել կրնար տալ.

Հսինք թէ Ալիքսանի թղթակցութեան մէջ ուրիշ հոտեր առաւ մեր տարագրեալը, միջնորդական հոտեր. եւ արդարեւ Վահրամի սիրտը եւ զգացումը ունեցող երիտասարդ մը իր պատրաստած ընկերին նամակը կարգալէ հոգ սերիչ կերպով չպիտի մատնէր. բողբոյ մը մէջ երեւոյթական բորբոքումով մը աչքին առջեւ պատկերացաւ Ակնը, իր հոն ձգած երիտասարդութիւնը, որ իր հոգին կը յոյժուէր, հիմա շատ լաւատես դարձած էր անոր մասին եւ իրեն անանկ կուգար որ անձանթ ձեռք մը անաղին հրաշքներ

գործած էր.

Այս խոհերով տոգորուած հետեւեալը գրեց Ալիքսանին.

«Նախ եւ առաջ կը պատուիրեմ քեզ բացարձակ գաղտնապահութիւն. հազար սարսափով այս նամակը գրեցի քեզ. կամ երկուքնիս ալ կը զոհուինք եւ կամ յարաբերական ամուր կապ մը կը հաստատուի մէջերիս. գաղտնի դեղով նամակագրութեան եղանակի մը մասին խօսած եմ քեզ հետ կարգալ յաջորդներն».

Աւելորդ կը սեպենք նամակի պատուականութեան մասին գրել հոս. ընթերցողը գիտաւ պիտի կրնայ ըմբռնել որ Վահրամ իրեն ամբողջ հոգին դրաւ հոն. ամեն տեսակ տեղեկութիւններ պաշտպանեց Ալիքսանէն տեղական ազգային գործերու, յեղափոխական կողմակիցութեան, գործերու ընթացքէն, Յովհաննէս ազգային անոր ընտանիքի մասին եւն. հոն.

Այդ օրը Վահրամի կեանքին մէջ երջանկագոյնը եղաւ. սիրտը անանկ մը թունդ ելած էր որ ուրախութիւնն չը

կրցաւ ճաշել այդ օրը մինչև որ իր սիրտը չթափեց երեկոյին Լիւսինի Լեռն ինչպէս վերիւր տեսանք աւելի յանդու գն բնաւ որութեան անէր ըլլալով. քանի մը անգամ առաջարկած էր անոր օր առաջ յարաբերութեան մէջ մտնել. բայց Վահրամ սխալ քայլով մը ուրիշներու աղետաբեր չըլլալու համար չէր համակերպուած Լիւսինի առաջարկին. եւ յետոյ, վճռապէս չէր կրցած որոշել թէ իր ունեցած ծանօթներէն որո՞ւ կըրնար վստահաբար պիտի, որովհետեւ անիկայ համոզուած էր յեղափոխական գաղտնիութեան առաջին շրջանին մէջ վստահութիւնը դժուարին հարց լինէր մինչև որ զիմուած անձը կենդանի յոյսեր չնկարչէր. Յովհաննէս ազգային ընտանիքէն կը զղուշանար որովհետեւ կառավարութեան անոնց եկած նամակներուն վրայ տարակուսելը բաւական էր. միեւնոյն բանը իր հօր ու մօր համար ալ.

Իւթ օր հաջորդ նամակը Ալիքսանին ձեռքը հասաւ որ զայն կարգացած օրը Միլիտանի հետ հանդիպումովն ալ ունե-

ձեռքին մէջ ունէր աւելի լայն եւ փաստացի թղթակցութիւն մը . ո՛ւր մնացայն , չհրատարակեց եւ գրեց մի լրբուկ , լիրբ և անպատուաբեր գրութիւն , պատճառ. պատճառն ինքնին յայտնի է , որովհետեւ կը պարունակէր « Խրաւունք » ի հասցէին հայհոյանքներ և ստորնացուցիչ բառեր . և ահա այս է որ կըստիպէ « Շարժում » ըստ իր աստվածան գնչուական եւ անձնական հաշիւներ ընելու :

« Շարժում » ի փափաքի համաձայն Գ. Ե. ծածկանուններն իրենց յայտնի անունով դուրս գալու պէտքը չունին , անոնք միշտ յայտնի է որոշ են . լաւ է որ Ունճեան գառի գիմից մենք այդ կը փափաքէինք , որ իր դրոշմն ընդունի գառատառնէն ուլ , իսկ Շարժում ի թէ կը փափաքի թող օժանդակէ Ունճեանին :

Ունճեան թող յիշէ՝ թանաքաժանր ս . . . կը մտաբերէ անշուշտ և սա խօսքը չմոռնար որ խօսեցաւ բրիտանի . « տէկիլ Պոնկարը մահպառ » իլլա սիրելիին ի թէ մէկ քի Պոնկարը գուրթուսուն :

Ունճեան լաւ գիտէ որ Գ. Ե. անուններու և իր մէջ անջրպետ մը կայ ստուգիւ . այդ մեզ չփայլեր իրմով զբաղիլ , սակայն բարոյական պարտքն կը ստիպէ զմեզ .

« Շարժում » ի մէջ հրատարակուած համակն Ունճեանի գրչէն և խելքէն դուրս եկած չէր . գիտենք թէ որ խաչագործն զրած է այդինք տակուին անունը և մակա . նունը ուղիղ գրել չգիտեր . բայց իմաստակարար կուզէ միշտ ազգային գործեր զեկաւարել ու իր անյաջողութեան մէջ բազմաթիւ ընտանիքներ թշուառացնել . իսկ « Շարժում » ոյս ամենը գիտնալով անսնց արձագանգ կըլլայ :

« Ո՛վ բարք , ով ժամանակ »
Ե .

ցած ըլլալով Շուշանին քովը վաղեցի Ե .

Մենք մեր վերջի տասը տարուան իրաւաբանական գործունէութեան մէջ համոզուեցանք որ աղքատի զատի դաւաճանները այդ սեւ պաշտօնին թելս . դրող քանի մը զլխաւոր պատճառներ ունեցան ինչպէս ամեն առեւ եւ ամեն ազգի մէջ , Աստիլի՝ նիւթական անմիջական շահ , երկրորդ փառասիրութիւնը , երրորդ ուրիշներու նկատմամբ ունեցած ատելութիւնը գոհացնելու մարմնով : Շարժումներն որոց մին զմեզ կը ծնի շատ անգամ :

Այդ հոս հարկ պիտի համարենք ըսել որ Միշտ ետքի անգամ տիկին վերջինէն խաչատուակարար միջոցներէն ետքը փոխանակ իր ունեցած դատապարտելի պակասութիւնը ճանչնալու եւ ինչպէս կըսուի ժողովրդային լեզուով « մեղայի գալու » առաջունէ աւելի չարացաւ . զինքը չըմպապատող ընկերութիւնը իրեն մահուան չափ ատելի կերակար . ասոր մէջ իրեն համար միայն երկու կէտ կը ներկանա-

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԳՈՒԹԻՒՆ
' Ի Ն Ա Պ Ե Շ Ի Ս Տ Ա Ն
— Խօս —

Յունիս ամսոյ գեղեցիկ օրերէն մին՝ Վոսփորի գունագեղ ափունքներուն մեր հրաժեշտի ողջոյնը տալով . Ռուսական « Օղկա » շոգենաւը կը հատէինք զէպի Աղեքսանդրիա երթալու համար , որ մեր ճանապարհորդութեան առաջին հանգրուանը պիտի ըլլար : հետո կը գտնուէին չմ մօտաւոր բարեկամներէս հայ մը եւ աղջիկ մը , որոնց հետ պիտի ճանապարհորդէինք մինչեւ Հապէշիւտան , աղջիկը իր ամուսինին տանելու հասցնելու համար , որ հոն բարեկեցիկ վիճակ մը ունեցած էր , շնորհիւ իր ազգականներէն միոյն , որ 15-20 տարիներ առաջ Հարար հաստատուած ըլլալով , կողմնորոշ մասնակցած . զինս վաճառութեամբ զբաղած եւ անբաւ հարստութեան տէր եղած էր : Մի քանի թուրքերէ . Յոյներէ և Եւրոպացիներէ զատ գրեթէ ուրիշ ճանապարհորդ չկար նա ուն մէջ . եւ գեղեցիկ օրով , գուրճալի ճամբորդութեամբ մը կը հասնէինք Աղեքսանդրիա եւ անկէ ալ կիջնէինք երկաթուղիով Փորթ-Սայիտ , որ Սուէզի ջրանցքին ծայրը գեղեցիկ քաղաք մըն է : Փորթ-Սայիտի մէջ մէկ օր հանգիստ առնելէ վերջ կը մտնենք Մէսաթուրի ընկերութեան « Ժէնոն » անուն հսկայ շոգենաւը վճարելով հինգ ոսկի վարձագին մինչեւ Ճիպութի , որ Հապէշական երկրի նաւահանգիստն է : Պոյիսէն շմինչեւ Փորթ-Սայիտ , մեր ճանապարհորդութիւնը շատ հաճելի եւ բազմազան եղած էր . անցած էինք Միջերկրականի հրաշալի կղզիներուն եւ քաղաքներուն առջեւէն . որոնց ի տես մարդ կը մոռնայ իր ամեն տխրութիւններն ու հոգեբար . եւ չնչած էինք հեղաշունչ գեփուները , որոնք նոր կեանք մը ու կենդանութիւն մը տուած էին մեզ : Մեր մտքէն իսկ չէր անցնէր թէ մի քանի օրուան անջրպետի մը մէջ ամեն բան պիտի փոխուէր , եւ այն գեղեցիկ օրերուն պիտի յաջորդէր հեղձուցիչ տաք մը : Կանաչ , դալարագեղ ափունքները փոխուած էին աւազուտ ծովազրներու , որոնցմէ փչած հովերը , փոխանակ զովացնելու , աւելի կայրէին . յաճախ աննկատաբար ի հանդարտութիւն եւ տաքութիւն մը կը տրիւր օգին մէջ , եւ հարկ կըլլար հովաւար մեքենաներ բանեցնել այդ անտանելի տաք մի քիչ մեղմելու համար : Վեց օր այսպէս ճանապարհորդելէ վերջ առանց տեղ մը կանգ առ-

յին մին յենարան մը քայմաքամը , որ որքան ալ զինքը կէտի մը մէջ խաբած ըլլար , այսու հանգիստ վերջապէս զինքը պաշտպանող ոյժ մըն էր . Հրանոյս չէր պայտամունքի առաջին օրու մասին իր զգացածը հետզհետէ կաւելնար , տեսակ մը խեղճութեամբ էր դաւաճանը որու ուղեղին մէջ հազար տեսակ անձանաչ հանգամանքներ իրար կը հալածէին . իր առեւտրական գործի վերջ տալի սուր աչքով չկրցաւ նայիլ . որովհետեւ սրտին մէջ հանդարտութիւն ըստած բանը չմնաց . կը կարծէր թէ Յովհաննէսը Աքեայի մէջ չորնալու գառապարտել տալով տրպար վրէժ մը լուծած էր , բայց միւս կողմէն գիտեր որ այդ գառապարտութիւնը բաւականութիւն չէր տուած իրեն . անիրաւ պիտի ըլլանք եթէ չըսենք որ , մերթ ընդ մերթ հոգին ցնցող տկար այլ ահա որ խղճի խայթը կը զգար , յուսահատեցուցի խղճի խայթը . եւ չեմ կարծեր գտնուի բարոյապէս բոլորովին ինկած դաւաճան մը որ այդ խայթը ունեցած չըլլայ , եթէ անիկայ շատ

նեղու հասանք վերջապէս Ճիպութի Հապէշիտանի նաւահանգիստը , զոր Ծր րանսացիք գրաւած են :

Հազիւ նաւը խարսխած էր , երբ բոլորովին մերկ ու բակտուն մարդիկներ լեցուեցան նաւը . մէկէնիմէկ շփոթած կարծեցի թէ մենք ալ Գոյոմպուսի պէս նոր աշխարհ մը կը գտնենք եւ հնդկի ներքով շրջապատուած ենք . բայց յետոյ հասկցանք որ տեղացիներն են , եւ եկած են մեզ իրենց նաւակներով ծովազերքը տանելու : Փաղաք կոչուած խոշոր գւղ մէկ , եղեգէ շինուած հիւղակներով ծածկուած , որուն մերկանդամ բնիկները , բուստի եւն . ի որսորդութեամբ կը զբաղին . կայ մէկ Գաղ-գիայի գառաւոր եւ մէկ քանի պաշտօնեայ , ու 8-10 հաս ալ գործատուներ , որոնք տեղացիներու աշխատութեանը վրայ կը հսկեն : Գաղգիայիք սկսած են նոր տուներ շինել , եւ քիչ քիչ քաղաքի կերպարանք տալ Ճիպութիին : Սոսկալի տաքութեան պատճառաւ անկարելի է ցորեկ ժամանակ արեւին տակ քալել , որուն պիտադրելու համար Գաղգիայի գործաւորները կը գործածեն տեսակ մը գովարար լայն գլխակ եւ կը հագնեն երկայն ու լայն կանեփէ շապիկ մը . ահա այս է իրենց ավորով հագուստը . իսկ բնիկները ինչպէս բնիք բոլորովին մերկ են ու կիսավայրենի . կը քայլեն բոկոսն ու գրու խնին լայն . քաղաքին մէջը ու գուրսը առանց բան մը ըլլալու ու նեղուելու , զի վարժ են տեղւոյն կիսալին : Մեր ծանօթ վաճառականը Ճիպութի մէջ ալ հրացաններ եւն . ծախելու վաճառանոց մը բացած է եւ յանձնած է իր ազգակիցներէն միոյն , որ մեզ տեսնելով շատ ուրախացաւ եւ ձեռքէն եկած գիր թիւնները ընծայեց մեզ :

(Շարունակելի)

ԼՐԱՔԱՂ

Գրեգորիս արք . Ալէաթեանի վիճակը քանի կերթայ կը ծանրանայ . Հիմակ ալ լեզուն ծանրացիր է , թէեւ ոչ միշտ : « Նէրասթէնի » հիւանդութիւնն որով կը տառապի՝ սա հետեւանքն ունեցած է որ սրտին երակներուն մէկ մասը պրկուեր կամ կարծրացեր է , Հետեւապէս եթէ արեան արագ հոսանք մը տեղի ունենայ , վախ կայ որ

անգամ իր թաւալած անգունդէն չը կրնար ճողոպրիլ պատճառը պիտու թեան աղբամուղջին մէջ խորասուզուած ըլլալը կը կարծես :

Գիտնալով հանգիստը որ դաւաճանները սովորաբար մաքու ինկածներն են , մեր յեղափոխական գործունէութեան մէջ եթէ թերութիւն մը ունեցանք ահա ալ ինկածները խելքի մօտ միջոցներով ճամբու բերելու չաշխատելիս է . եթէ թուրքի մէջ զանոնք դարձի բերելու համար ճիգը ըլլային անոնց հարկերն յիսունը պիտի նուազէր . ասոր համար է որ շատ անգամ խրատի տեղ դաշոյնը խաղաց որը դժբաղդաբար վրիպեցաւ եւ ենթակայն առանց վառանգուելու առաջինէն աւելի չար կեցա :

Գալով դաւաճաններուն , հակառակ այս վերջիններու գերմարդկային ճիգերուն անկարող եղան իրենց կատարած սեւ դերը հասարակութիւններէ ծածկելու , որովհետեւ անոնց զոհերը շատ դիւրաւ կրցան որ . չիլ իրենց ոսոխը :

Տիկին վերջինէն Յուհաննէս աղայի ետքի նամակը եւ Միշտի այցելու-

երակ չիբրթի , և հիւանդը կաթուածահար չըլլայ նոյն հետան : Ուստի վերջին ծայր զգուշութիւն . ներ կըլլայ որպէսզի մի՛ գուցէ բարախումները շատնան : Հիւր ընդունիլ , բան կարգալ , ամենափոքրը յուզման առիթ տալ՝ բացարձակապէս արգիւտած է ահա՛ այս պատճառաւ : Աւելի ցաւալին ա՛յն է որ ասանկ հիւանդութիւն մը զըրիթէ անբուժելի է , կըսուի , եւ ժամանակաւոր ապուրիւնութիւն մը ալ ըլլայ , միշտ փտանգի մը զախը կայ : Աւելցուցէ՛ք տոտր վրայ նիւթականի խեղճութիւնը , և տըխուր բայց ճշգրիտ պատկերը պիտի ունենաք ձեր աչքին առջեւ :

Բիզազանդիոն

— Կիպրոսի Լարնաքա քաղաքին մէջ ունինք եղբի Եէնի գաբուցի տէրտէր մը , խման , քեօր գինով , որ քար գայթակղութեան եղեր է տեղւոյն հայերուն , որք զգուշով , թողեր են Հայ եկեղեցին և Յունոց եկեղեցին կը յաճախեն : Այս մարդիկ կը գրեն ի Պատրիարքա , բան , և ճամբորդի բերնով ալ կը հաղորդեն թէ այս քահանան այն տեղէն հեռացուի , եթէ չուզուիր բոլորովին փակել Լարնաքայի հայոց եկեղեցին : Ի կիպրոս , ուրիշ քահանայ մ'ալ ունին Նիքոսիայի մէջ , բայց անիկայ շնորհքով մէկն է եղեր , և Ս . Մակարի վսեքին մէջ բացուած Որբանոցին ուսուցիչներէն է եղեր :

— Մնցեալ հինգշաբթի գիշեր Մաքրիգիւղի եկեղեցին գողեր մտնելով 40-50 ոսկի արժողու թեամբ արծաթեղէն անթմներ գողցեր են : Գողերը դեռ չեն բռնուած :

Մէկ ու կէս տարիէ աւելի է որ ռուս կառավարութեան հրամանին համեմատ Թիֆլիզի « Արձագանգ » թերթը գոյութենէ գաղթած է . պահ մը կը կարծուէր որ միւս ռուսահայ « Մշակ » և « Նոր-Գար » օրաթերթերը աւելի սպառում գտնելով իրենց դիրքը կապահովեն . բայց ցաւալի է որ Թիֆլիզէն նաւակ մը կիմոցնէ թէ , նիւթական

թիւնը ընդունելէ հետք , քանի մը ընտանիքներու հաղորդեց այս վերջինի իր ամուսինին տարապարտութեան մէջ կատարած դերի մասին , շատ չանցաւ այդ յուրը Ակին եւ չըմպապարտութեան մէջ տարածուեցաւ . իր ամենէն մօտ ծանօթներն անգամ ծուռ աչքով սկսան նայիլ վրան : Միշտի ակնաշք հասան չըլած զրոյցները . առաջին անգամ յուզուեցաւ , բայց ինչպէս ըսինք , փոխանակ քաւելու աւելի մօտեցաւ Բիզաէֆէտիին ուրտեղ սկսաւ հանդիպիլ յայտնա Լիճքի Պիտրոս Պոտաքեանի , Զիմարացի Նարին Յովհաննէս Մօրուեանի եւ Միւս Արմատանցի Պոյաճեան Գեորգի , որը դեռ նոր սկսած էր փայլիլ եւ այնչափ առաջ գնաց ի վերջոյ որ Դ . կարգի Մէծիտիէով ալ վարձատրուեցաւ բարեխնամ կառավարութեան : Միշտ ասոնց միացաւ անդաւարար :

Շ . Կաւմարակաւ
(Շարունակելի)

անձկութեան պատճառաւ «Նոր-
Դար»ը եւ քանի մը օրէ ի վեր չը
հրատարակուիր, այս լուր լաւ տը-
պաւորութիւն չձգեր մեր վրայ
կովկասահայոց «ընթերցասիրու-
թեան մասին, մանաւանդ նամա-
կագիրը այդ առթիւ կը յաւելու
թէ՛ Բուսիոյ մէջ հրատարակուող
ոչնէ հայերէն գիրք 500 օրինա-
կէ աւելի սպառուած չէ կարող ու-
նենալ, ցաւալի բան. ո՛րք մնաց
նուսահայ «ընթերցէի» գոսա-
կարգը:

— Բէզէրսպուրկի մէջ քանի մը
տարիէ ի վեր բրօքսիտ Լապիտի
ձեռքով հրատարակուող երկամս-
եայ ռուսերէն հանդէսի մը խըմ-
բագրութիւնը յանձնուեր է գիւ-
ղատնտեսութեան մասնագէտ Պ.
Աւետիս Քալանթարի:

Այս հանդէսը կը պարունակէ
գլխաւորապէս մրգարուծութեան
եւ պարտիզպանութեան վերաբեր-
եալ յօդուածներ:

ՍԵՆ ԽԱՍԱՐԱԹԸ

— Խ. Ծ. —

Պու չարչանպա կիւնիւ ստաթ
7 րատուէրինտէ պաշտպան 9ա
գատար տէվամ իտէն շիտտէթի
եաղմուրտան հասըլ օլան սէլլէր
չէհրիմիլին էքսէրի մահէլլէրինի
պատու պիր չօգ խանէլէր վէ
պալը տիւքեանլար երգմը վէ
եիւլլէրնէ ֆամիլիալարը բերուչա-
նիլէթէ տիւչար իթմիլ տիր:

Շէհրին շիմալի շարգ ճիհէթին.
տէ տաղլարտան վէ պաղլարտան
էնէն սէլլէր իչիւն էվլէլտէն աչըլ-
մըլ օլան սէլ հօլլարը պու տէ-
ֆաղի սէլին չօղըլընա քիթայիթ
իթմէմիլ վէ պու սէպէպլէ սուլա-
լըն պիր գըսմը տօղըու էվլէր
իւզէրինէ իլէրլէմիլ տիր. բէք
չօգ ախապ պինալար երգմը վէ
սէլին աղըլնտա պուլընան պա-
լը քիւսվիր տիւլարլար տէլինմիլ
տիր: Շէօլլէքի վառնա իչէրի-
սինտէ սէլ սուլը իլէ տօլմամըլ
օլան մաղաղա (գաթօյ) բէք նատիր
տիր:

Մէկքիւր չարչանպա աղչամը
սաթ 8 րատուէրինտէ թէքրար
կէօք պուլուտլար վէ շիմիլիլէր
էթրաֆը պիւրիւմիլ վէ հէրքէսէ
տէհէթ վէրմիլ օլտըլը հալտէ
պիր գաչ տագիգա եաղտըգտան
սօնրա հալա աչըլտը. ֆաթաթ
պու տէֆա տախի վարնանըն շի-
մալի զարպ թարաֆընտան կէլէն
սէլլէր Գաթիւր. պապա վէ Չիլիլէն
մահէլլէրինի պատու պէնիտէն
պիր թագըմ էվլէր երգմը տըր:

Վարնա խարիճիւտէ պաղլարա
տախի խալը խասարաթ իրաս
իթտիկի կիպի Տէֆնէ նամ մահէլ-
տէն պիր գաչ տէրմէն երգմը
տըր:

Շուկուտա վէ պախուսուս Բը-
րօվաւտա տախի բէք չօգ խա-
րաթ օլտըլը ըիվայէթ օլընրօր
իսէտէ, թէլէկրաֆ վէ չըմէնտը-
ֆէր խաթլարը սէլլէրտէն պօղուլ-

մուլ օլտըլընտան, պու սաթըլա-
լը եաղտըլըմը պաթաթ գատար
ճիտտի վէ թաֆիւլաթլը պիր մա-
լիւմաթ աղընմամը տըր:

Պալլըգտա տախի խալը մա-
ղարաթ հասուլա կէլտիկի ըիվա-
լէթ օլընրօր:

Ումումէն տուլալտըլընա կէօրէ
ինտան թէլէֆիլաթլը 3-4 քիլիտէն
իպարէթ տիր:

Բուսնուգ-Վարնա չըմէնտըֆէր
խաթլը պիր գաչ մահէլտէ պ-
ղուլմըլ օլտըլը կիպի, Բրօվաւտը
Ուլմէն տարաւտա իքի քիլօմէթ-
րօ եէր աւմէթէն խարապ օլմըլ
տըր:

ՄԻԻԹԵՆԵՎ ՎԻՅԷ

Պուրկաղ-Եւմալ օլմէնտըֆէր
խաթլը իւզէրինտէ համալլըլէ
մէլլուլ օլան հայտատանը միլլէթ-
տալլըրմըլտան պիր թագըմը
ճիհալէթ էլաւմէթի իլէ պիր նէլ
հիլէքիւրլընա գուրպան կիլմէք-
տէ իմիլլէր. Եւնի թաղէոս իս-
մինտէ պիր հիլէքիւր «վնցհա-
զարեայ» իսթիմալի իլէ եէրտէն
մալ չըգարմաթ իչթիտարընա հա-
իլ պուլընտըլընա տալիր պիլիմ
սէֆիլ հայտատանը պիրտտէրլէրի
գանտըրուպ, ծիլարըն պիլլէրնէ
ֆրանզլարըն սարֆ իթմիլ վէ
պու սայիտէ քէնտի վիճուտի ֆա-
սիտէսինի պու կիւնէ գատար պէս-
լէմիլ տիր:

— Բազար կիւնիւ վէ կէճէսի
Բարիստէ Շուպուլ սօգաղընտա
նիւմայիլլէր տէվամ իթմիլ վէ է-
հալի իլէ բօլիսլէր տարաւտա զա-
լէթ շէտիտ աղպէտալար վուգու
պուլմուլ, ճամար գըրըլէր, իքի
կալէթաճը պարագասը երգմը վէ
րէվօլլէրլէր պալաթըլմըլ տըր:
Նիւմայիլլէրտէն 380 քիլի վէ
բօլիսլէրտէն 59 քիլի եարէլէնմիլ-
լէր, 150 քիլի թէվլէթ օլընմըլ:
Պիր գաչ ապէր միւֆրիլէսի սիւն-
կիւլի թիւֆէնլէրլէ Շուպուլ սօ-
գաղըն մուհաֆաղա իթմէքտէ
տիրլէր: Անթիսէմիլլէրին իլէ
Մ. կէրէն մալիւմ օլան իտարէ-
խանէտէ ըֆիլլէրլէր իլէ էլան գա-
բանմըլ տըր. ֆաթաթ հիլէճէք-
լէրի պիլմէքտէ իմիլ:

— Ախիլէն իլմիր լիմանընտա
տէմիր աթմըլ օլան սէֆիլլէրլէր
թայիլլէրլէրտէն պիրի իսլամ
մուհաճիլլէրլէր ախտ օլտուլընա պէ-
յանլա գարայա 5 պէօյիւք սան-
տըլ չըգարմըլ տըր. հալպու քի
բօլիսլէրտէն պիրի շիւպէլլէրլէր
սանտըլարը աչմըլ օլմալլա, ի-
չինտէն 23000 թիւֆէնկ գարսօլը,
1125 ըվօլվէր գուրընը, 1000
ատէտ կրա թիւֆէնկի գուրընը
վէ 96 մէթրօ ֆիլթիլ գուհուր իթ-
միլ տիր:

— Սլանալ Կալէթալարընա
պինալէն, պու սէնէ Անատուլտա
մահալլ ֆէվլէլաթտէ պէրէքէթլի
օլուպ պիր այա գատար նաղլի-
լաթա պալանաճաղընտան, Անա-
տուլ չըմէնտըֆէր գուրբանաթ
10 լօքօմօթիլ իլէ պիր խալը

պէօյիւք վալօն ճէլպ իթմիլ տիր:
— Կէլէն հաթթա Պուրկարիւ-
տան Սլանալ 300 նուֆուս իս-
լամ մուհաճիլլէր կիտալ, իսքեան
իսթիլմէք իչիւն իլմիլ կէօնտէ-
րիլմիլլէր տիր:

— Սուլթանըն ճիւլուսը մինտա-
պէթի իլէ իճրա օլընտաճա գէյ-
նէթլէրի սէյր իթմէք իչիւն Գա-
րատալ Բրէնսի Սլանալ կի-
տէճէք տիր:

— Մանաթլըր ճիւլարընտա Սի-
մօթ իսմինտէ ղէնկին պիր առա-
մըն էլգըլա թարաֆընտան տաղա
գալտըլլըլտըլընա տալիր «Լ. Հէ-
րայտ» կալէթալար լիթիտէք թաֆ-
սիլաթլը վէրիլօր. «Օգոստ. Յ
իւնի աղչամըլ Սիմօթ» գարընը,
իքի գալին պիրտտէրլէր վէ ի-
քիսի գարը օլմաթ իւզրէ տիկէր
տէօրթ քիլի իլէ պիրլիքտէ, Գը-
լիսուրա օրմանընտա պիր չէլմէ
պալընտա օթուրուպ էլլէնմէքտէ
իքէն. 15 միւսէլլա չէլգըլա պիր-
տէն պիրէ մէյտանա չըգըլ իւզէ-
րինէ հիւնուլ իթմիլլէր, վէ պիր
գալին պիրտտէրլէր իլէ ուչաղա-
լընտան պիրլին թէլէթ, վէ տի-
լէր գալին պիրտտէրլին ճէրհ ի
տէրէք, քէնտիսինի տէ տաղա ա-
չըրմըլար տըր: Վուգուլաթ մա-
հալլի հիւքիւմէթլինճէ իչիլիլէրէք
ժանտարմալար՝ էլգըլալը լիտա-
գիպէ պալալմըլար տըր: Էլգըլա՝
Սիմօթլըն գարընը, գըլընը վէ
պէսլէմէսինի Գլիսուրայա կէօթիւր
միլլէր տիր:

Էլգըլա չէթէսի ըէյիսի՝ ժան-
տարմալար իլէ վուգու պուլան պիր
միւսաթմէսինտէ, ալաղընտան հա-
րէլէնմըլ. վէ հալ պու քի կէճէ.
նին գարանլըլընտան իսթիֆաթէ
իտէրէք, գալմաղա մուսֆիպա օլ-
մուլար տըր: Էլգըլալար, հէքաթի.
կէրիլլէ Բուսնա կէօրիւլմէքտէ ի-
միլլէր: Գօրիցա վէ Գաթթօրիցա
հիւքիւմէթլը մահալլիլլէրլէր՝ հու-
տուտան էլգըլանըն թէճալուլընը
մէն իթմէք իչիւն լաղըմ կէլէն
թէտպիլլէր իթթիլալ իթմիլլէր
տիր: Պու մաղսէտլէ թիւրքիւ վէ
Եւնան հուտուլը գօմանտանընա
Սէրֆիլլէ միւլէսարըֆընա վէ
սայիլլէրէն էմըլլէր վէրիլմիլ տիր:

— «Տէլիլ թէլէկրաֆ»ըն Բէթէրս.
պուրկ մուսպիրինտէն ալտըլը մա-
լիւմաթա կէօրէ, Ալըմամիա, Ա-
ւատրիւ-Մաճառիստան վէ Բուս-
իա իմէրաթլարը՝ Բուս Լէհիւս-
տանընա Սքիլէրէնէից շէհրինտէ
պիր միւլաղաթ իճրա իտէրէք,
միւհիմ բօլիլթիգա մէսէլլէրլէր
թալթը մուպահապա ալաճաղ-
լար ըմըլ:

Ա. Զ. Դ.

Հայերէնի, Ֆրանսերէնի, Թուրքի-
տուրքիան, Անգլիան, Ալաբան, Ազգ.
Սրբ. եւ քնական պատմութեանց հը-
մուտ մի ուսուցիչ պատրաստ է պաշ-
տօն ստանձնել Պուրկարիոյ հայ վուր-
ժարաներէ միոյն մէջ գիւրամաղլի
պալմաններով:

Դիմել խմբագրութեան:

ԱՊՕՆԵԼԵՐԻՄԻՉԷ

Կալէթա պէտլլինի էլան էօ.
տէմէմիլ օլան զաթլարըն պիլա.
թէլէթիւր պօրճուրըն իֆա իթմէ.
լէրինի ըէճա խէրիլ:

Քէօլլէրտէ սաթին օլան ապօնէ.
լէրիմիլլէ սուհուլէթ օլմաթ իւզրէ
իթմար էլլէրիլ քի գատապալարա
կիլմէլլէրլէնտէ պիլլէ օլան պօրճ.
լարընը բօլթայա վիլմէք գալմէ.
թինէ գաթլանմաղլար իսէ պարի
աթիտէք զաթլարա թէպիմ իթ.
սինլէր:

Սիլիսարէտէ՝ Մ. Կարապետ Ուլաշեան
Տուրքիլլէ՝ Մ. Նշան Գաթրիլլէնա
Թուրքիլլէ՝ Մ. Յարութիւն Հաճեան
Ռուսնուգալ՝ Մ. Հրանտ թիւթիւնեան
Բազկարատա՝ Մ. Եղիա Պապիլիւս
Շուկուտա՝ Մ. Սողոմոն Պոյաճեան
Բրօվաւտա՝ Մ. Յակոբ Սինանեան
Պալլըգտա՝ Մ. Արմէնակ Բէլիլլէնեան
Ֆիլիպէտէ՝ Մ. Տիգրան Պէնիւն
Սիլիլլէնտէ՝ Մ. Սալիկ Թուհաֆեան
Վիտտէնճէտէ՝ Մ. Նիւրէս Տէօվլէթիւն

Ա. Զ. Դ.

Կ. Պուսոյ թաղային վարժա-
րաններու մէջ երկար տարինը
պաշտօն վարած է Ալգ. Պատրի.
աիքարանէ վկայիւ տիկին մը
պատրաստ է թէ Պուրկարիոյ և
թէ արտասահմանի վարժարանաց
մէջ պաշտօն ստանձնել:

Փորձ վարժուհի մը պէտք ու-
նեցող աղգային մարմինք թող գի-
մն խմբագրութեան:

ԲՈՒԼԻ ՔՕԼԵՔՍԻՈՆ

Բուլի սքանչելի քօլէքսիօն սը
ժալուս հանուած է, աւելի քան
երկու հազար բուլիերով, որոնց մէջ
բազմաթիւ հաղուպիտներ, մի-
այն քօլէքսիօն տառնց բուլի,
կարծէ 50 ֆրանք:

Գնել փափաքողները գիմն
խմբագրութեան:

ՎԱՆԱՍՏԱՆՈՅ ՄԵՔԵՆԱԳՈՐԾ
ՉԱՌՆԱ

Ա. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Տրակուան փողոց թիւ 1210

Ժամանակէ մը ի վեր երկրա-
գործական մեքենաներով զբաղած
ըլալուս պատճառաւ իմ մասնաւոր
գործարանս գոց կը մնար:

Այժմ կուգամ ծանուցանել թէ
ամին տեսակ կարի մեքենաներու
համար մասնագէտ վարպետ մը
բերել տուած եմ:

Գործարանիս մէջ կը նորոգուին
նաեւ շոգեշարժ եւ ջրաշարժ մե-
քենաներ, հիմնախիւս (պիսիլլէթ)
գուլպայի եւ երկրագործական մե-
քենաներ, ջրհաններ եւ. զորս
նորոգել վերջի վերջ մէկ տարուան
միջոցին աւուրին պատրաստ եմ
վերանորոգելու: Նոր ջրաղացներ և
շոգիէ աղօրթնիկ նոր խնորր կը
հաստատենք ընտիր կերպով:

ԿԸ ՓՆՏՈՒՈՒՐ

Ֆիլիպին Ասքորեան անուն հայուհի
մը. իր հասցէն ու որ գիտէ թող հա-
ճի խմբակը Տէր Սարգիս հօր:

Отговорникъ Н. Драгулевъ
Печатница на Хр. Н. Войнико